




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թ.

ԹԻՎ 334

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆԻՆ

Էլեկտրոնային տարբերակով Ձեզ է ուղարկվում Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2016թ. դեկտեմբերի 13-ին ընդունված որոշումները /արձ. 2/:

Առդիր՝ 125 էջ:



Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Կապարող՝
Գ. Դափումյան
/0232/3-52-02

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 1 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/18 և <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել Աշտարակ քաղաքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի ու վճարների հետևյալ դրույքաչափերը /կցվում է Հավելված 1, 2/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴԻԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**2017Թ. ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ
ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱ ԶԱՓԵՐ /դրամ/
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
հիմնական օբյեկտների համար՝	
ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ.	15000
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ,	30000
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ,	50000
բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ.	50000
բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100000 դրամ	100000
ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,	3000
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ:	5000
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3000 դրամ.	3000
բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:	5000
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝	
<i>ոգելից և ակոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝</i>	
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.001 դրամ	
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13.001 դրամ,	
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 20.001 դրամ,	
101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 25.001 դրամ,	
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 45.001 դրամ,	
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 100.001 դրամ:	
<i>ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝</i>	

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.001 դրամ,	
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 13.001 դրամ,	
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 20.001 դրամ,	
101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 25.001 դրամ,	
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 45.001 դրամ,	
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 100.001 դրամ:	
5. Համայնքի տարածքում՝	
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	0
բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000-200 000 դրամ.	300000
գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-60 000 դրամ.	30000
գա համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է հիմնական շինությունների ներսում՝	
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5.001 դրամ,	2500
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 10.001 դրամ	10000
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.001 դրամ,	15000
101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 20.001 դրամ,	20000
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 30.001 դրամ,	30000
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 50.001 դրամ,	50000
գա համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղականտուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է ոչ հիմնական շինությունների ներսում	
մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1.001 դրամ,	10000
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 2.001 դրամ,	2000
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 4.001 դրամ,	4000
101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 8.001 դրամ,	8000
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.001 դրամ,	15000
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 25.001 դրամ:	25000
5 ¹ . համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:	50000
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, գվարձանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	
ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000-50 000 դրամ.	50000
բ) հանրային սննդի և գվարձանքի օբյեկտների համար՝ 50 000-100 000 դրամ.	50000
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000-500 000 դրամ.	200000
դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000-1 000 000 դրամ.	1000000
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ.	250000
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ:	150000
7. Համաքաղաքային կանոնների համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ:	0
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության	

համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝	
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ:	2000
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ:	3000
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ:	1500
դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:	0
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:	1000
Աշտարակ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000-ից 100000 դրամ	100000
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:	0
10.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 - 500 000 դրամ:	150 000
11.2.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ. բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ. դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:	

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/
Աշտարակ համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները	
ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	25000
բ/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000
գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար	10000
դ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար /Հավելված2/ -կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար -տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող աղբահանության ծառայության դիմաց զանձվող ամսեկան վճար	150
Ե) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար: Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 խմ աղբի համար Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 տոննա աղբի համար	2500 8000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

**ՀՀ ԱՐԴԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՑԵԿՏՆԵՐԻՆ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

	<i>Շինության անվանումը և գործունեության տեսակը</i>	<i>Աղբահանության ամսական վճարի չափը (ՀՀ դրամ)</i>
1	Կրպակներ և մթերային խանութներ	մինչև 10քմ՝ 500
	- 10-20 քմ առևտրային մակերես	500
	- 20-40 քմ առևտրային մակերես	1000
	- 40-70 քմ առևտրային մակերես	2000
	- 70-100 քմ առևտրային մակերես	2000
	-100-150 քմ-ից ավելի առևտրային մակերես	3500
	-150 քմ-ից ավելի առևտրային մակերես	8000
2	Հագուստի խանութներ	
	- մինչև 30 քմ առևտրային մակերես	1000
	- 30-50 քմ առևտրային մակերես	1000
	- 50-80 քմ առևտրային մակերես	1500
	- 80-100 քմ առևտրային մակերես	2000
	-100 քմ-ից ավելի առևտրային մակերես	3500
3	Կենցաղային, տնտեսական և արդյունաբերական ապրանքների խանութներ	
	- մինչև 50 քմ առևտրային մակերես	2000
	- 50-100 քմ առևտրային մակերես	2000
	- 100-150 քմ-ից ավելի առևտրային մակերես	3500
	-150 քմ-ից ավելի առևտրային մակերես	8000
4	Ավտոտեխսպասարկման կայաններ	
	- մինչև 50 քմ մակերես	1000
	- 50-100 քմ մակերես	1000
	- 100 քմ-ից ավելի մակերես	2000
5	Բենզալիցքավորման կայաններ	
	- 1-2 լիցքավորման սարք	1500
	- 3 և ավելի լիցքավորման սարք	2000
6	Վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ	
	- մինչև 20 քմ մակերես	500
	- 20-50 քմ մակերես	1500
	- 50 քմ-ից ավելի մակերես	2000
7	Հանրային սննդի օբյեկտներ	
	- <i>ռեստորաններ, ճաշարաններ</i>	
	մինչև 50 քմ մակերես	2000
	50-100 քմ մակերես	5000
	100 քմ-ից ավելի մակերես	15000
	- <i>սրճարաններ</i>	
	մինչև 10 սեղան	3000
	10-15 սեղան	5000
	15-ից ավելի սեղան	6000
	Դեղատներ	

8	- մինչև 30 քմ մակերես	1000
	- 30-60 քմ մակերես	1000
	- 60 քմ-ից ավելի մակերես	2000
9	Գրասենյակներ, օֆիսներ,	
	- մինչև 40 քմ մակերես	1000
	- 40-60 քմ մակերես	1500
	- 60-80 քմ մակերես	2000
	- 80 -150քմ մակերես	3500
	- 150քմ-ից ավելի մակերես	12000
10	Բուժ. հիմնարկներ	
	հիվանդանոցներ և կլինիկաներ	
	- մինչև 50 մահճակալ	8000
	- 50-100 մահճակալ	10000
	- 100 և ավելի մահճակալներ	12000
	Ատամնաբուժարաններ	
	- մինչև 2 սպասարկման աթոռ	1000
	- 2-4 սպասարկման աթոռ	2000
	- 4 և ավելի սպասարկման աթոռ	2000
11	Նախադպրոցական ուսումնական հիմնարկներ, հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, սպորտդպրոցներ, երաժշտական դպրոցներ	
	- 1 անձի համար	20
	<i>Նախադպրոցական ուսումնական հաստատություններ</i>	
12	- 1 անձի համար	80
	Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ	
13	- 1 անձի համար	40
	Հյուրանոցներ	
	- մինչև 10 սենյակ (համար)	3000
	- 10-30 սենյակ (համար)	5000
14	- 30 և ավելի սենյակ (համար)	8000
	Բանկեր	
	- մինչև 50 քմ մակերես	3000
	- 50-100 քմ մակերես	4000
	- 100-150 քմ մակերես	5000
	- 150-200 քմ մակերես	6000
15	- 200 քմ-ից ավելի մակերես	8000
	Թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ	
16		1000
	Բնակչության կենցաղսպասարկման ծառայություններ (ատելյեներ, ֆոտոատելյեներ, համակարգչային և ինտերնետ ծառայություններ)	
	- մինչև 20 քմ մակերես	500
	- 20-50 քմ մակերես	1000
	- 50-80 քմ մակերես	2000
17	- 80 քմ-ից ավելի մակերես	3000
	Ծաղկի վաճառքի խանութներ և սրահներ	
	- մինչև 20 քմ մակերես	1000
17	- 20-50 քմ մակերես	2000
	- 50 քմ-ից ավելի մակերես	3000

18	Առևտրի ժամանակավոր և շարժական կետեր	1000
19	Շուկաներ	
	- մինչև 200 քմ մակերես	5000
	- 200 քմ-ից ավելի մակերես	10000
20	Արտադրամասեր	
	- մինչև 200 քմ մակերես	3000
	- 200 քմ-ից ավելի մակերես	5000
	<i>Մենդի արտադրություն</i>	
	- մինչև 100 քմ մակերես	2000
	- 100-200 քմ մակերես	2500
	- 200 քմ-ից ավելի մակերես	3500
21	Գազալցակայաններ	
	- մինչև 3 լիցքավորման սարք	5000
	- 3-5 լիցքավորման սարք	10000
	- 5-ից ավել լիցքավորման սարք	15000
22	Տաքսի ծառայություններ	
	- մինչև 10 քմ մակերես	1000
	- 10-30 քմ մակերես	2000
	- 30 քմ-ից ավելի մակերես	2000
23	ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանումներ	
	- զորամասեր	8000
	- զինկոմիսարիատներ	3000
24	Գյուղ. մթերքների վաճառքի կետեր	
	- մինչև 10 քմ առևտրային մակերես	1000
	- 10-50 քմ առևտրային մակերես	3000
	- 50 քմ-ից ավելի առևտրային մակերես	5000
25	Ամառային հանգստի գոտիներ	30000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 2 - Ն ՈՐՈՇՈՒՄ

2017թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/3 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասի առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2017թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասի առաջարկությանը՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- <Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
 - ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
 - բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	/հազ.դրամ/ Ընդ.
Եկամտային մաս	465940.6	0	465940.6
Ծախսային մաս	465940.6	6000.0	471940.6
Դեֆիցիտ	0	-6000	-6000.0
Պահուստային ֆոնդ	23500	0	23500

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ԶԵՆՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

N 3 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ԶԵՆՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

N 4 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ղեկավարի 02.11.2016թ. թիվ 19/1-Ա կարգադրությունը և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/29 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների /փաթեթը գտնվում է ֆինանսատնտեսագիտական բաժնում/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ԶԵՆՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՒՅՔ
ՀԱՇՎԵԿՇՈՒՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/

N 5 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ղեկավարի 02.11.2016թ. թիվ 19/1 -Ա կարգադրությունը և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/29 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել շահագործման ոչ պիտանի՝ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը, դուրս գրելով հաշվեկշռից:

- Ըստ կազմակերպությունների դուրս գրվող գույքի փաստաթղթերը գտնվում են աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնում:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՆՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՍՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ
ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

N 6 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով <Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածը, <Հանրային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 28-րդ հոդվածը և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել Աշտարակ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների էթիկայի և վարքի կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՆՈՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՍՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Կանոնների նպատակը

1. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԻ նպատակն է սահմանել էթիկական վարքագծի չափանիշներ, որոնց պետք է հետևեն ՏԻՄ-երը իրենց ամենօրյա պարտականությունների կատարման ընթացքում հանուն հանրության կողմից վստահության վերականգնման ու հաստատման:
2. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԸ չպետք է դիտվի որպես առանձին փաստաթուղթ, այլ որպես քաղաքական գործելակերպի, ՏԻՄ-ի գործունեությունը կարգավորող վարչական ընթացակարգերի կամ ներքին կանոնակարգերի անբաժանելի մաս՝ շեշտելով ՏԻՄ գործունեության էթիկական կողմն ապահովելու կարևորությունը և այն դարձնելով կառավարման գործառույթ:
3. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԸ իրենից ներկայացնում է դրույթների հավաքածու, որում ներառված արժեքների նկատմամբ ՏԻՄ-ը հայտնում է իր հանձնառությունը

Հիմնավորումներ

1. Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման համատեքստում ընդլայնվում է ՏԻ մարմինների (Ավագանի, համայնքի ղեկավար), համայնքային ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնողների եւ համայնքային ենթակառուցվածքի աշխատակիցների գործունեության շրջանակը. հասարակությունն ավելի ու ավելի բարձր պահանջներ է ներկայացնում նրանց աշխատանքի որակի նկատմամբ:
2. Պետության կողմից իրականացվող ապակենտրոնացման քաղաքականության պայմաններում ՏԻՄ-երը ստանձնում են նոր լիազորություններ և գործառույթներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել սահմանափակ միջոցների առկայության պայմաններում՝ ապահովելով որոշումների կայացման մասնակցայնությունը, կիրառելով հանրային-մասնավոր համագործակցության տարբեր ձևաչափեր:
3. Հնարավոր չէ ապահովել քաղաքացիների իրական լայն մասնակցություն տեղական ինքնակառավարմանը առանց ՏԻՄ –երի նկատմամբ հանրային վստահության ամրապնդման, նրանց աշխատանքում պատասխանատվության, թափանցիկության և բարեվարքության ապահովման:
4. Սույն ԿԱՆՈՆՆԵՐԸ բխում է ՏԻՄ համակարգը կարգավորող օրենսդրության (ՀՀ Սահմանադրության, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, ՏԻՄ մասին օրենք, Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենք և այլն) ոգուց: Այդուհանդերձ, էթիկայի և վարքի ոլորտին առնչվող որոշ հարցեր կամ չեն կարգավորվում օրենքներով կամ առկա կարգավորումները լրացուցիչ մանրամասնության կարիք ունեն:

5. Սույն Կանոնների ընդունումով ձևավորվում է հակակակշիռ՝ տեղական մակարդակում լիազորությունների չարաշահման կամ կամայական կիրառման, անազնիվ վարքագծի, հայեցողական իրավունքի ի չարս գործադրման:
6. Սույն Կանոնները նպատակ ունեն նպաստելու Հայաստանում հակակոռուպցիոն միջոցառումների՝ տեղական մակարդակում իրականացմանը՝ առավելապես դիտարկելով ոչ միայն կոռուպցիայի առանձին դրսևորումներ, այլ որպես համակարգային արատ, որ պետք է կանխարգելել:

Կանոններ

1. Տեղական ինքնակառավարման մարմինները՝ ավագանի, համայնքի ղեկավար, համայնքային ծառայող, հայեցողական պաշտոնյաներ (այսուհետև՝ ՏԻՄ ներկայացուցիչ) պետք է իրականացնեն իրենց գործառույթները և լիազորությունները **բացառապես ի շահ հանրության** և ոչ թե առանձին անհատների, խմբերի, կամ անձնական շահի:
2. ՏԻՄ ներկայացուցիչն ընդունում է, որ **իր միակ գործառույթը** իր գործատուին՝ **հանրությանը ծառայելն է**, և պարտավոր է շարունակաբար կատարելագործել իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները բարելավելու մատուցվող ծառայությունների որակը:
3. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է դրսևորի **օրինակելի վարք**, գերծ մնա անպարկեշտ պահվածքից: Քաղաքացիների նկատմամբ մշտական բարյացակամ և կիրթ վերաբերմունքը անբաժանաելի են ՏԻՄ ներկայացուցչի կերպարից:
4. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա աչառու վերաբերմունքից**, ինչը կարող է կասկածի տակ առնել ՏԻՄ անկողմնակալությունը և խաթարել ՏԻՄ-ի նկատմամբ քաղաքացիների վստահությունը:
5. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա խտրական վարքագծից**, առաջնորդվի հավասարության, մարդու իրավունքների հարգման սկզբունքով:
6. Հարգելով տեղեկատվություն ստանալու քաղաքացիների իրավունքը, ապահովելով թափանցիկ և հաշվետու կերպով աշխատելու պահանջը **գերծ մնալ** ի պաշտոնե իրեն հասանելի **տեղեկատվության չթույլատրված բացահայտումից**, որը բխում է անձնական կամ որևէ խմբային շահից:
7. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է **գերծ մնա շահերի բախումից**, երբ ՏԻՄ ներկայացուցչի սեփական շահը գերադասվում է մասնագիտական կամ հանրային շահից: Պաշտոնը ստանձնելիս կամ ընտրվելիս ՏԻՄ ներկայացուցիչը հայտարարագրում է իր շահերը:
8. Լիազորությունները վայր դնելու կամ պաշտոնից հրաժարվելու դեպքում ՏԻՄ ներկայացուցիչը չպետք է իր պաշտոնավարության ընթացքում ձեռք բերած տեղեկությունը կամ կապերը օգտագործի **ևոր աշխատավայրում արտոնություններ** կամ առավելություն ապահովելու նպատակով:
9. Այն դեպքում, երբ ՏԻՄ ընտրված ներկայացուցիչը քվեարկության դրված հարցի մեջ անձնական, նյութական, դրամական կամ այլ ուղղակի շահ ունի, ապա նա պետք է այդ մասին հայտնի ՏԻՄ-ին, **չպետք է մասնակցի** այդ հարցի վերաբերյալ **քվեարկությանը**՝ շահերի բախման դեպքից խուսափելու նպատակով:

10. ՏԻՄ ներկայացուցիչը պետք է ուշադիր լինի **երկու կամ ավելի պաշտոն զբաղեցնելու հետ կապված սահմանափակումներին**: Մասնավորապես, չի կարող ունենալ գործառույթներ, որոնք ենթադրում են վերահսկողություն մեկը մյուսի նկատմամբ:
11. Որոշումներ կայացնելիս ՏԻՄ ներկայացուցիչը պետք է առաջնորդվի ոչ միայն օրենքի տառով, այլև օրենքի ընդհանուր գաղափարով՝ ոգով: Այս առումով յուրաքանչյուր որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի իր որոշման էթիկական կողմը, օրինակ՝ որոշումը կարո՞ղ է վնասել որևէ մեկին կամ խմբին, տվյալ հարցը տնտեսապես նպատակահարմա՞ր է, արդյո՞ք որոշումը հիմնված է լիարժեք տեղեկատվության հիման վրա, որոշման ո՞ր տարբերակն է, որ հաշվի է առնում բոլոր ներգրավված կողմերի շահերը, ո՞ր տարբերակն է որ ներքին բավարարվածություն կարող է բերել:

Կիրարկումը

1. Սույն Կանոնները հանդիսանում է ուղեցույց և կարող է լրամշակվել կամ տեղայնացվել ՏԻՄ–ի կողմից, որից հետո այն ընդունվում է ավագանու նիստում:
2. ՏԻՄ ներկայացուցիչը ընտրվելով կամ ստանձնելով պաշտոնը ծանոթանում է սույն Կանոններին և ստորագրում համապատասխան ձևաթուղթը, որը կցվում է անձնական գործին:
3. ՏԻՄ-ը ձևավորում է էթիկայի հանձնաժողով բաղկացած ՏԻՄ պաշտոնյաներից և համայնքի հեղինակություն վայելող քաղաքացիներից, որը վերահսկում է Կանոնների կատարումը, դիտարկում է Կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումներ և դեպքեր, Ի գիտություն ընդունում ՏԻՄ ներկայացուցչի շահերի բախման հետ առնչվող հայտարարագրերը, սահմանում և կիրառում է Կանոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցներ:
4. Կանոնները հրապարակային են և հասանելի հանության համար:

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016թ.-ի ՀՄ. 20-Ա ԵՎ 27.09.2016թ.-ի ՀՄ. 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 7 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Համայնքի ավագանու 14.11.2016թ. N 20-Ա և 27.09.2016թ. N 4-Ա որոշումներում ի հայտ եկած վրիպակները վերացնելու նպատակով, ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ.-ի հմ. 20-Ա որոշման մեջ

- Արամ Քաջավանի Ներսիսյանին տրամադրված գույքահարկի հարկային արտոնությունը /20,612 ՀՀ դրամ/ փոխարինել հողի հարկի արտոնություն բառերով:
- Հենրիկ Կարապետի Զազյանին տրամադրված գույքահարկի հարկային արտոնությունը /23,372 ՀՀ դրամ/ փոխարինել Կարապետ Հովհաննեսի Զազյան բառերով:
- Հենրիկ Կարապետի Զազյանին տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը /9941 ՀՀ դրամ/ փոխարինել Կարապետ Հովհաննեսի Զազյան հողի հարկի արտոնություն 4193 ՀՀ դրամ բառերով և Հենրիկ Կարապետի Զազյան հողի հարկի արտոնություն 5748 ՀՀ դրամ բառերով:

Աշտարակ համայնքի ավագանու 27.09.2016թ.-ի հմ. 4-Ա որոշման մեջ

- Ֆրոլովա Ամալյա Թորգոմի տրամադրված գույքահարկի և հողի հարկի հարկային արտոնությունը փոխարինել Ֆրոլովա Ամալյա Արամայիսի բառերով:
- Արտուշ Աբրահամյանին տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը /20000 ՀՀ դրամ/ փոխարինել 12587 ՀՀ դրամով:
- Արզումանյան Հենրիկ Արտաշի տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը /50,66 ՀՀ դրամ/ փոխարինել Արզումանյան Հրաչիկ Արտաշի հողի հարկի արտոնություն 5066 ՀՀ դրամ բառերով և Արզումանյան Հրաչիկ Արտաշի գույքահարկի արտոնություն 9977 ՀՀ դրամ բառերով:
- Սարկիսյան Գայանե տրամադրված գույքահարկի և հողի հարկի հարկային արտոնությունը փոխարինել Խոջոյան Նազիկ բառերով:
- Ռոզա Հովհաննեսի Գրիգորյանին տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը /61423 ՀՀ դրամ/ փոխարինել 18422 ՀՀ դրամով:
- Կարեն Աղիկի Կարապետյանց տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը /2056 ՀՀ դրամ/ փոխարինել 20560 ՀՀ դրամով:
- Պապյան Արսեն տրամադրված հողի հարկի հարկային արտոնությունը փոխարինել Պապյան Աղասի բառերով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՈՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ
ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

N 8 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով որոշ ֆիզիկական անձանց դիմումները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, <Հողի հարկի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ներքոնշյալ ֆիզիկական անձանց տալ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություններ /կցվում է Հավելված 1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 12

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՅ - 0

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՄԱՍՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

Ն. Անդրեասյանը չի մասնակցել քվեարկությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

Հ/Հ	Անուն	Հայրանուն	Ազգանուն	Գույքահարկ	Հողի հարկ
1	Հրաչյա	Հակոբի	Աղումյան	100 000,00	
2	Նորիկ	Սիմոնի	Անդրեասյան	70 000,00	
3	Անուշ	Ավետիսի	Թամազյան	11 525,00	18 200,00
4	Էդուարդ	Արամայիսի	Վարսանյան	20 880,00	
5	Սուրեն	Վահանի	Խորենյան	60 000,00	
6	Վաչագան	Երջանիկի	Սողոմոնյան	70 000,00	
7	Անահիտ	Սարգսի	Գասպարյան	12 624,00	11 238,00
8	Գառնիկ	Կառլենի	Բաղդասարյան	12 973,00	18 305,00
9	Աղավնիկ	Արտաշի	Գյուլասարյան	14 976,00	
10	Վահագն	Գարեգինի	Գ-որգյան	4 863,00	
11	Արտաշ	Արծրունի	Թումանյան	66 996,00	
12	Սերգեյ	Վալերի	Ասկարյան		14 255,00
13	Խաչիկ	Գագիկի	Միքայելյան	35 378,00	
14	Մարինե	Ռազմիկի	Մալխասյան	526 858,00	
15	Հայկ	Վոլոդյայի	Սարգարյան	30 000,00	
16	Լիլիթ	Ազատի	Թումանյան	80 000,00	
17	Սրբուհի	Ասատուրի	Սարգարյան	63 000,00	
18	Աշոտ	Դանիելի	Հունանյան	22 000,00	
19	Սամվել	Ռաֆիկի	Գևորգյան		13 400,00
20	Թինա	Հրաչյայի	Խաչատրյան	53 000,00	8 700,00
21	Գուրգեն	Սերգեյի	Հովհաննիսյան		44 500,00
22	Հռիփսիմե	Արմենակի	Ազատյան	16 000,00	
23	Գագիկ	Սերգեյի	Սարգսյան	35 000,00	
24	Մարիցա		Կաբակուլակյան	25 028,00	
25	Վազգեն	Հովհաննեսի	Հովհաննիսյան	40 241,00	10 413,00
26	Ամասիա	Ռոբերտի	Մաղաքյան	150 000,00	
27	Աննա	Կառլենի	Պետրոսյան	50 583,00	5 922,00
28	Սամվել	Նավասարդի	Մանուկյան		3 688,00
29	Նավասարդ	Սամվելի	Պետրոսյան	29 844,00	
30	Ղազար	Չոհրաբի	Մարգարյան	46 929,00	
31	Բելա	Սաուխի	Սաֆարյան	23 181,00	
32	Վարդան	Սաուխի	Սաֆարյան	342 193,00	100 601,00
33	Սարգիս		Հովհաննիսյան	170 000,00	
				2 184 072,00	249 222,00

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍՏԱՐՅԱՆ/

N 9-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 177-017 ծածկագրով 203քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված հողամասերի ցանկից դուրս է մնացել, սակայն համայնքի վարչական սահմանների ճշգրտման արդյունքում պարզվել է, որ վերը նշված հողատարածքը իրականում հանդիսանում է համայնքային սեփականություն, հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 177-017 ծածկագրով 203քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 12

ԴԵՄ - 0

ՁԵՈՆՊԱՅ - 1

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍՏԱՐՅԱՆ/

N 10-Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի N102 դրական եզրակացությունը՝ Գոհար Կարապետյանի սեփականությունը հանդիսացող Աշտարակ քաղաքի Աշտարակ տեղամասում գտնվող, 02-001-0859-0473 ծածկագրով 1,97հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,0338հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու մասին, դեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հավելվածի 72-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և <Աշտարակ> տեղամասում գտնվող, 02-001-0859-0473 ծածկագրով, Գոհար Կարապետյանի սեփականությունը հանդիսացող 0,0338հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման:

2. Ի գիտություն ընդունել, որ փոփոխվող հողամասի կադաստրային արժեքների տարբերությունն ենթակա է վճարման համայնքի բյուջե:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՈՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ.ԴԱՏՈՒՄՅԱՆ/

N 11-Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 31/6, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 26/1.բ և Աշխատանքային օրենսգրքի 188 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար ներքոհիշյալ համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար.

- Գրիգոր Դատումյան - ՀՀ կառավարության 05.11.1997թ. N 487 որոշում - 30000 դրամ
- Տիգրան Չալաբյան - համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդական - 20000 դրամ
- Անուշ Արամյան - համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան - 20000 դրամ
- Աննա Տոնյան - աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 դրամ
- Մամիկ Մահակյան - աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 դրամ
- Միրանուշ Պապյան - աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 դրամ
- Գոհար Մովսիսյան - աշխատանքային ծավալների ավելացման և ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված - 20000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է 2017թ.-ի հունվարի 1-ից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ԶԵՆՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ/

N 12 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Կազմավորել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով 9 հոգուց, հետևյալ կազմով՝

- Շահվերդյան Թովմաս - հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար
- Հովսեփյան Սիրազնիկ - հանձնաժողովի անդամ, մարզպետարանի վարչության պետ
- Մուրադյան Ռաֆիկ - հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակից
- Հովսեփյան Տիգրանուհի - հանձնաժողովի անդամ, մարզպետարանի աշխատակից
- Հունանյան Աշոտ - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ
- Մկրտչյան Վահագն - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ
- Գալստյան Տիգրան - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ
- Շահազիզյան Կարեն - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ
- Տաշչյան Մուշեղ - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 11

ԴԵՄ - 1

ՁԵՌՆՊԱՅ - 1

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-րդ դեկտեմբերի 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ.ԴԱՏՈՒՄՅԱՆ/

N 13 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով համայնքի ավագանու կանոնակարգի 5-րդ գլխի պահանջներով /23-րդ ենթակետ/, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Ստեղծել մշտական հանձնաժողովներ և հաստատել նրանց կազմը՝

1. Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.

Վահագն Մկրտչյան	Կարեն Շահազիզյան
Տիգրան Գալստյան	Սամվել Շուխյան
Աշոտ Հունանյան	Նորիկ Անդրեասյան
Արտաշես Խաչատրյան	Մուշեղ Տաշյան
Բաբկեն Վարդանյան	Հայկ Վարդանյան
Սարիբեկ Օվոյան	Վահե Մովսիսյան
Ազատ Զաքարյան	

2. Սոցիալական ապահովության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

Վահագն Մկրտչյան	Ազատ Զաքարյան
Տիգրան Գալստյան	Կարեն Շահազիզյան
Աշոտ Հունանյան	Մուշեղ Տաշյան
Արտաշես Խաչատրյան	Հայկ Վարդանյան
Բաբկեն Վարդանյան	Վահե Մովսիսյան
Սարիբեկ Օվոյան	

3. Իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

Վահագն Մկրտչյան	Նավասարդ Պետրոսյան
Տիգրան Գալստյան	Հայկ Վարդանյան
Կարեն Շահազիզյան	Վահե Մովսիսյան

4. Ֆինանսավարկային, բյուջերային և փնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

Աշոտ Հունանյան	Մուշեղ Տաշյան
Արտաշես Խաչատրյան	Հայկ Վարդանյան
Կարեն Շահազիզյան	Նորիկ Անդրեասյան
Արմենակ Սարգսյան	Վահե Մովսիսյան

5. Ենթակառուցվածքներին առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

Վահագն Մկրտչյան	Արմենակ Սարգսյան
Տիգրան Գալստյան	Կարեն Շահազիզյան
Արտաշես Խաչատրյան	Մուշեղ Տաշյան
Աշոտ Հունանյան	Հայկ Վարդանյան
Սարիբեկ Օվոյան	Վահե Մովսիսյան

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ԶԵՈՆՊԱԴ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՎԱՀԵ ՍՈՎՍԻՍՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՄՈՒՇԵԼ ՏԱՇՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը ղեկավարելու 2016թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.11.2016թ.-ի ՀՄ. 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ/

N 14 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով 02.06.2016թ. ՀՀ Կառավարության N 631-Ն, որոշումը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ մասով, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 14.11.2016թ.-ի հմ. 9-Ա որոշման մեջ <Գևորգ Եղիազարյան> բառերը փոխարինել <Սամվել Սահակյան> բառերով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը դեկտեմբերի 2016թ.

ՀԱՐԵՎԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՎԱԾ ՊԱՆԵԼՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

N 15 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ա/Զ Լ. Ալմասյանի կողմից Աշտարակի համայնքապետարանին պատկանող <Արևիկ> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքից ապամոնտաժված ծածկի անցքավոր պանելների ընթացիկ շուկայական արժեքի հաշվարկը, ընդառաջելով Կարբի համայնքի բնակիչ Արթուր Հայրապետյանի պանելներն իրեն վաճառելու խնդրանքին, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. <Արևիկ> մանկապարտեզի շենքի ծածկի առկա անցքավոր 18 (տասնութ) պանելներից 14-ը (տասնչորս), 18000 դրամ հազար արժեքով (ընդամենը 252000 դրամ)՝ ուղղակի վաճառքով օտարել Կարբի համայնքի 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի հմ. 8 տան բնակիչ Արթուր Հայրապետյանին:
2. Օգտագործման ոչ պիտանի 5 (հինգ) պանելները դուրս գրել կազմակերպության հաշվեկշռից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 13

ԴԵՄ - 0 ԶԵՈՆՊԱՅ - 0

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ


ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա
Ծ Ր Ա Գ Ի Ր
(Հ Զ Հ Ծ)

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի
կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից:
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի կողմից:
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 13.12.2016թ. թիվ 3-Ն որոշմամբ:

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ուղերձը	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	8
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	22
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	24
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	30
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	33
3.1 Համայնքի զարգացման տեսլական	33
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	33
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	41
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	41
6. ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում	42
7. ՀՀԶԾ իրականացումը	42
8. ՀՀԶԾ գնահատում	43
9. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ	44
Հավելված 1 - Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը ...	46
Հավելված 2 - Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը	47
Հավելված 3 -01.07.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի	56
Հավելված 4 - Աշտարակ համայնքում գործող առևտրի, ծառայությունների ցանկը	60
Հավելված 5 - Հապավումների ցանկ	62
Հավելված 6 - Ծրագրերի անձնագրեր	63

1. Համայնքի ղեկավարի ուղերձը

ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2016 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա ենթակառուցվածքներ և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ,

ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ոհսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Աշտարակ համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

1996թ-ից Արագածոտնի մարզկենտրոն դարձած Աշտարակ համայնքը հանրապետության միջին մեծության քաղաքներից է:

